ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ««Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարներ և մեթոդներ: Ուսուցման մեթոդների ընտրության չափանիշները

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Արմինե Վարդանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Բարձրաշենի միջն. դպրոց

ՄԵՆԹՈՐ՝ Արմեն Կարեյան

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 6
1.1. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կարևորությունը 6
1.2. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպումը, հնարները և մեթոդները, դրանց ընտրությունը 9
ԳԼՈՒԽ 2. «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ 12
2.1. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցումը հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչների համապատասխան 12
2.2. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարներն ու մեթոդները ՀՀ դպրոցներում..... 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 21
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

21-րդ դարում, երբ մենք ականատես ենք լինում աշխարհաքաղաքական, հասարակական բազմաթիվ փոփոխությունների, կարիք է առաջանում կրթակարգը ևս համապատասխանեցնել արդի իրողություններին, որպեսզի սովորողը կարողանա պատկերացում կազմել նոր աշխարհակարգի մասին և ապագայում կարողանա երջինիս պայմաններում պահպանել սեփական արժանապատիվ գոյությունը: «Հասարակագիտություն» առարկան դպրոցական ծրագրում նախատեսված է, ըստ ինձ, հենց այդ նպատակով

Առանձնապես կարևորվում է «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման շրջանակներում այնպիսի հնարների և մեթոդների ընտրությունը, որոնք թույլ կտան փոխանցվելիք դասանյութն առավել արդյունավետ մատուցել սովորողներին և ստանալ առավելագույն արդյունք: Ուսուցման մեթոդների ընտրության հիմքում դնելով անհրաժեշտ չափանիշները «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչները կկարողանան անհատների մեջ կերտել պետության, նույնիսկ՝ ազգի, կայացման գլխավոր գործոնը՝ ***քաղաքացուն:***

Արդյունավետ հնարների և մեթոդների ներդրման արդյունքում «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչները սովորողի գիտակրթական մակարդակում կձևավորն սոցիալական իրականություն, որտեղ կկայունացվեն սովորողի քաղաքացիական որակները և կզարգանան պատասխանատու կենսավարման համապատասխան հմտությունները: Արդյունքում «Հասարակագիտություն» առարկայի միջոցով հնարավոր կլինի հասնել ժողովրդավարական արժեքների կենսունակության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) տիրող իրավիճակը և Արցախի ցավալի դեպքերը, ինչպես նաև համաշխարհային մակարդակով պատերազմական իրադարձությունները էլ ավելի են ընդգծում «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման կարևորությունը դպրոցում: Բացի այդ նշված իրադարձությունները ստիպում են «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչներին անընդհատ վերապատրաստվել, ինքնակրթվել, ուսումնասիրել առարկայի դասավանդման միջազգային փորձը և շարունակաբար կատարելագործել առարկայի դասավանդման մեթոդիկան:

Այսպիսով, «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարների և մեթոդների ընտրությամբ պայմանավորված անհատից քաղաքացի կերտելու կարևորությամբ, այդ կերտման մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունների մեկնաբանմամբ, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմամբ է պայմանավորված ուսումնասիրվող թեմայի գծով հետաքրքրությունը, ընտրությունը և այժմեականությունը:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարների և մեթոդների ուսումնասիրություն՝ առարկայի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման համատեքստում: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- դիտարկել «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կարևորությունը,
- մեկնաբանել «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպումը, հնարները և մեթոդները, դրանց ընտրությունը,
- մեկնաբանել «Հասարակագիտություն» առարկայի ուսուցումը հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչների համապատասխան,
- ուսումնասիրել «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարներն ու մեթոդները ՀՀ դպրոցներում:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման պայմաններում, իսկ առարկան՝ ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարների և մեթոդների ընտրությամբ պայմանավորված արդյունքները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը

Հետազոտության տեսական նշանակությունը դրսևորվում է «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման կարևորության ընդգծման, տարբեր հեղինակների մեկնաբանությամբ արդյունավետ հնարների և մեթոդների դիտարկման ձևով: Հետազոտության գործնական նշանակությունը դրսևորվում է նրանում, որ մենք փորձել ենք «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարներն ու մեթոդները ներկայացնել պետական և առարկայական չափորոշիչների լույսի ներքո:

Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն: Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման մեթոդական մոտեցումների վերաբերյալ աշխատությունները,
- ուսումնասիրվել է «Հասարակագիտություն» առարկայի տարբեր դասարաններում դասագրքերում զետեղված նյութերը, գերակա թեմաները,
- առաջադրվել են «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կատարելագործմանն ուղղված համապատասխան միջոցներ:

Հետազոտության գերակա հարցը: Ո՞ր հնարներն ու մեթոդներն են նպաստում «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման գործընթացն առավել արդյունավետ դարձնելուն:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 23 էջ:

ԳԼՈՒԽ 1. «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կարևորությունը

Որպես դպրոցական առարկա «Հասարակագիտությունը» ձևավորվել և դպրոց է ներմուծվել անցյալ դարի առաջին քառորդին: Առաջին անգամ որպես դպրոցական դասընթաց «Հասարակագիտությունը» ԽՍՀՄ լուսավորության ժողկոմատի կողմից հաստատվել է 1925թ.: Առարկայի հիմքում ընկած էր արդիականության ուսումնասիրման խնդիրը: Այդ գործում «Հասարակագիտությանը», որպես հասարակական գործընթացների արտապատկերման օրինակ, պետք է օգներ «Պատմությունը»: 1927 թ. «Հասարակագիտությունը» բոլոր դպրոցներում դարձավ համընդհանուր պարտադիր ուսումնական առարկա: 1936 թ. ընդունվեց ԽՍՀՄ-ի նոր սահմանադրությունը (Ստալինյան սահմանադրություն) և, դրա հետ կապված, նույնանուն դպրոցական առարկան: Դժվար չէ կռահել, որ նոր դասընթացը ենթադրում էր այդ պահին գործող Սահմանադրության բովանդակության ուսումնասիրություն: Այն դասավանդվում էր 7-րդ դասարանում[1]:

Դասավանդման ընթացքում ուսուցիչներին խորհուրդ էր տրվում համապատասխան օրինակներ բերել առանձին գործիչների կյանքից ու գործունեությունից, հաստատություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև օրենսդրական ակտերից ու վիճակագրությունից: Թույլատրվում էր նաև օրինակներ բերել արտասահմանյան երկրների կյանքից, պայմանով, որ համապատասխան օրինակներում պետք է արտացոլվեր երիտասարդության կոմունիստական դաստիարակությունը: 1947 թ. դպրոցական առարկայացանկը համալրվեց ևս երկու հասարակագիտական առարկաներով՝ «Տրամաբանություն» և «Հոգեբանություն», որոնք, սակայն, դպրոցականների ուսումնական գերծանրաբեռնվածության դեմ պայքարի հետևանքով, հանվեցին արդեն 1955թ.:

Ա.Մալոյանն իր հոդվածում մեջբերում է 1962 թ. «Հասարակագիտություն» առարկայի ուսումնական դասընթացի ծրագրից հատված.

1. Դիալեկտիկական պատմական մատերիալիզմը՝ գիտական աշխարհայացքի հիմք:
2. Սոցիալիզմ. կոմունիստական հասարակության առաջին փուլը:
3. ԽՄԿԿ. խորհրդային հասարակությունը ղեկավարող և ուղղորդող ուժ:

[1] Մալոյան Ա. ««Հասարակագիտություն» առարկայի դասավանդման խնդիրների շուրջ», «Մարդ և հասարակություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N 2 (64), 2016., էջ 18:

4. Սոցիալիզմից կոմունիզմին աստիճանական անցման ուղիները:

5. XX դար. կոմունիզմի հաղթանակի դարը:

Հեղինակը նշում է, որ ակնհայտ է, որ խորհրդային ժամանակաշրջանում «Հասարակագիտության» դասընթացը կոմունիզմի գաղափարական քարոզչության սպասարկմանն էր ծառայում: Սակայն հասարակության վերակառուցման պայմաններում շատ դասավանդողներ ստիպված էին հրաժարվելու քարոզչական դրոշմներից ու կարծրատիպերից: Ուսուցիչներին ներկայացվեցին բոլորովին այլ պահանջներ.

1. Հրաժարվել դոգմատիկ մեթոդիկաներից:

2. Հրաժարվել ավտորիտարությունից:

3. Հրաժարվել սովորողներին չհետաքրքրող մեթոդիկաներից և նյութերից:

4. Կիրառել սովորողների սեփական փորձը[2]:

Ահա այս իրականության պայմաններում էլ «Հասարակագիտություն» առարկան սկսեցին դիտարկել նոր լույսի ներքո: Ինչպես արդեն նշեցինք մեր հետազոտության ներածական բաժնում, «Հասարակագիտություն» առարկայի ուսուցումն առանձնակի կարևորություն ունի 21-րդ դարի հարափոփոխ իրականության պայմաններին սովորողների մոտ հարմարվելու և կենսագործելու կարողունակություն ստեղծելու համատեքստում:

Ժամանակակից հասարակագիտությունը պետք է սովորողներին տրամադրի գիտելիքներ սոցիալական և հումանիտար գիտությունների բոլոր ոլորտներից: Ներկայումս կրթությունն ուղղված է բարոյականության, ոգեղենության հարցերի ուսումնասիրմանը: Կրթության նոր մակարդակի բարձրագույն իմաստը մարդկային կյանքի արժեքի, անձի զարգացման, բնության, հասարակության և մարդու ներաշխարհի հետ փոխգործակցության մեջ է: Նման հարցերն առանձին ուսումնասիրելն անհնար է: Օպտիմալ լուծումը այս փոխգործակցության տարանջատումը և ինքնուրույն գիտությունների համատեքստում սովորողին ներկայացնելու մեջ չէ: Առավել արդյունավետ է մանկավարժորեն ընտրված գիտելիքը՝ ինտեգրված մեկ հասարակագիտական դասանյութի մեջ մատուցելը, որպիսին հենց «Հասարակագիտություն» առարկան է:

Ներկայումս դպրոցում հասարակագիտությունը միջառարկայական դասընթաց է: Հասարակագիտական կրթությունը հանրակրթական համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում՝ կատարելով առաջադրանքներ, որոնք ի վիճակի չէ կատարել որևէ այլ առարկա: Ասվածը միտք չունի թերագնահատել այլ առարկաների կարևորությունը և այլ

[2] Մալոյան Ա. ««Հասարակագիտություն» առարկայի դասավանդման խնդիրների շուրջ», «Մարդ և հասարակություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N 2 (64), 2016., էջ 18:

առարկաներ դասավանդող ուսուցիչների ավանդը սովորողների՝ պետությանը պիտանի քաղաքացիներ մեծացնելու գործում, սակայն գիտելիքը, որը մենք, հասարակագիտական ոլորտի ուսուցիչներս ենք փոխանցում սովորողներին, չի կարող փոխարինվել կամ լրացվել այլ առարկաների շրջանակներում մատուցված որևէ գիտելիքով:

Հասարակագիտության առջև դրված խնդիրներն են.

- ստեղծել պայմաններ տարբեր սոցիալական հարաբերություններում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, ազգային, մշակութային և գաղափարական անհատի ինքնորոշման համար,
- սովորողների մոտ ձևավորել իրենց կարծիքներն ու համոզմունքներն ազատ ազատ իրացնելու գիտակցում, ինչպես նաև ձևավորել քննադատական մտածողություն,
- նպաստել սովորողների մոտ շրջապատող աշխարհի մասին գիտելիքների բավարար մակարդակի ձևավորմանը,
- նպաստել մշակութային բաղադրիչի շնորհիվ համաշխարհային մակարդակին համարժեք հասարակական գիտական բովանդակության (բարոյական, բնապահպանական, քաղաքական, իրավական մշակույթ) ձևավորմանը.
- նպաստել քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, որը ներառում է քաղաքական, տնտեսական, բարոյական և իրավական բաղադրիչներ[3]:

Վերը բերված նպատակներից պարզ է դառնում, որ «Հասարակագիտություն» առարկան բովանդակում է համալիր տեղեկատվություն փիլիսոփայությունից, իրավագիտությունից, բարոյագիտությունից, գեղագիտությունից և տարբեր դասարաններում ներկայացվում է իր տարբեր բաղադրիչների՝ փիլիսոփայության, քաղաքացիական կրթության, իրավունքի, քաղաքագիտության, տնտեսագիտության, բարոյագիտության, գեղագիտության, հոգեբանության ձևով[4]:

Հասարակագիտության կրթական ներուժը ժամանակակից աշխարհում ամենուրեք կարևորվում է կրթական գործընթացի հումանիզացման պահանջը, քանի որ նեղ մասնագիտական կրթության գերիշխանության պայմաններում առաջանում են մասնագիտական հանրություններ, որոնց ներկայացուցիչները միմյանց հետ հաղորդակցվելու ընդհանուր հումանիտար հիմքից զուրկ լինելու պատճառով, որպես կանոն, բախվում են: Կրթության մեջ տեխնիկական միջոցների ներդրման հարաճուն

[3] Толочко А. В. Теория и методика обучения обществознанию в школе: учебное пособие. – Елец: Елецкий государственный университет им. И.А. Бунина, 2019. – 124 с., с. 13.
[4] Գյուլբուդաղյան Ա. Վ., Հարությունյան Կ. Ռ., Թովմասյան Տ. Ա., Հասարակագիտություն: 8-րդ դասարան: Դասագիրք հանրակրթ. հիմն. դպր. համար, Երևան, Զանգակ, 2013:

միտումներին դրականապես հակազդելու և ժամանակակից աշխարհում ի հայտ եկած մի շարք համընդհանուր հիմնախնդիրներ լուծելու տեսանկյունից ավելի ու ավելի է կարևորվում «Հասարակագիտություն» ուսանելու անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում[5]:

Յուրաքանչյուր երկրում, երբ ընթանում են ժողովրդավարացման գործընթացներ, կարիք է առաջանում անհատների մեջ ներարկել այնպիսի որակներ, որպիսիք են սեփական անձի և այլ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների գիտակցումը և կենսագործումը, մասնակցությունը կառավարման գործընթացներին: Քաղաքացիական հասարակության անդամները պետք է գիտակցեն, որ իրենք են սեփական կրթության պատասխանատուները, կարողանան դրանցից բխեցնել իրենց նպատակները և հասնել դրանց, այդ նպատակների միջոցով իրենց ապահովել իրենց տեղը հասարակության մեջ և կատարել այնպիսի գործառույթներ, որոնք չեն խոչընդոտի հասարակության բնականոն կենսագործունեությանը: Վերը բերված բոլոր կարևորագույն արժեքները սովորողների մեջ կերտվում են հասարակագիտական առարկաների միջոցով, որոնցից ամենակարևորը, թերևս, հենց «Հասարակագիտությունն» է:

1.2. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպումը, հնարները և մեթոդները, դրանց ընտրությունը

Դասավանդման գործընթացի արդյունավետ կազմակերպումը ողջ ուսումնական գործընթացի արդյունավետության երաշխիքն է: Եթե հասարակագիտության դասավանդումը համակարգված չի իրականացվում, ապա սովորողների բարձր առաջադիմության և հայրենասեր, պատասխանատու անհատի ձևավորումը մնում է չհաղթահարված:

Կազմակերպումը բավականին բարդ գործընթաց է և սկսվում է ուսումնական համալիրների ընտրությունից: Ուսումնական համալիրներ ասելով սովորաբար հասկանում ենք ուսումնամեթոդական գրականությունը, զննական և այլ միջոցները հասարակագիտության դասավանդման յուրաքանչյուր դասընթացի վերաբերյալ: Այս հասկացությունների մեջ մտնում են՝

1. Ուսումնական ձեռնարկներ (ուսումնական օժանդակ ձեռնարկներ, քրեստոմատիաներ, ընթերցանության համար նախատեսված գրքեր):

[5] Մալոյան Ա. ««Հասարակագիտություն» առարկայի դասավանդման խնդիրների շուրջ», «Մարդ և հասարակություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N 2 (64), 2016., էջ 20:

2. Մեթոդական գրականություն:

3. Գիտական, գիտահանրամատչելի և գեղարվեստական գրականություն (մենագրություններ, ընթերցանության համար նախատեսված գրքեր):

4. Ուսումնական զննական միջոցներ (տպագիր, ծավալուն, էկրանային և ձայնային):

Այս ամենի ընտգրությունից հետո անցում է կատարվում հնարների և մեթոդների հնարավոր տարբերակների դիտարկմանը: Ինչպես ցանկացած այլ ուսումնական առարկա, այնպես էլ «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպումը ենթադրում է որոշակի հնարների և մեթոդների կիրառում, որոնց ճիշտ մշակումը հնարավորություն կընձեռի ուսուցչին առավել արդյունավետ կազմակերպել ուսուցման գործընթացը:

Առաջնահերթ ենք համարում ընդգծել, որ «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման հնարների և մեթոդների ընտրության համատեքստում ուսուցիչը պետք է դրսևորի աշակերտակենտրոն մոտեցում: Հաջորդ մոտեցումը, որի հիմքով ուսուցիչը պետք է ընտրի ուսուցման հնարներն ու մեթոդները, դա ժամանակի հրամայականն է: «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչը մշտապես պետք է ընտրի այնպիսի հնարներ և մեթոդներ, որոնք թույլ կտան ամեն հնարի և մեթոդի շրջանակներում առավելագույնս ներկայացնել համեմատականներ տվյալ ժամանակաշրջանին բնորոշ իրադարձությունների հետ:

Հնարների և մեթոդների ընտրության համատեքստում ուսուցիչը պետք է առաջնորդվի նաև դրանց՝ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ բովանդակելու փաստով: Նորարարական մեթոդները, որոնք առավելապես հարմարեցված են նորագույն տեխնոլոգիաներին, պայմանավորում են ուսուցման որակը:

Հնարների և մեթոդների ընտրության նպատակով ուսուցիչը պետք է դիտարկի այն ճանաչողական ակտիվությունը, որն ապահովվում է դրանց կիրառման արդյունքում, ինչը միևնույն ժամանակ սովորողների մոտ ձևավորում է դիալեկտիկական մտածողություն, որն էլ շղթայական կերպով հանգեցնում է փորձառական, տեսական և գործնական գիտելիքների տարբերակմանը: Այս չափանիշներով ընտրված հնարները և մեթոդները նպաստում են ոչ միայն գիտելիքների ձեռքբերմանը, այլև սովորելու անհրաժեշտության ձևավորմանը, միջանձնային հաղորդակցությանը, մտածողության կարողունակության զարգացմանը:

Մեթոդ ասելով հասկանում ենք այն ուղին, որով հնարավոր է հասնել հետազոտության նպատակների կատարմանը: Մեթոդաբանությունը ենթադրում է այնպիսի միջոցների ամբողջության առկայություն, որի միջոցով մենք ճանաչում ենք ուսումնասիրվող

տնտեսական երևույթը և դիտարկում այն համակողմանիորեն[6]: Մեթոդ ասելով ըմբռնվում է գործունեության եղանակների և հնարների յուրահատուկ համակարգ, որն ապահովում է գործունեության խնդիրների իրականացումը: Այն ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերտների համար գիտելիքներ, կարողունակություններ, հմտություններ յուրացնելու եղանակն է, այսինքն՝ ուսուցչի և աշակերտների առանձնահատկությունների դրսևորումը ուսուցման գործընթացում: Ուսուցման գործընթացում բացի մեթոդից կիրառվում է նաև հնարը, որը մեթոդի բաղկացուցիչ մասն է կազմում: Օրինակ, ինչպես ձեռք բերված հասարակական ոլորտի գիտելիքները ճիշտ կիրառել պրակտիկայում: Մեթոդները ուսուցման գործընթացի բաղադրամասերն են, որոնք օգնում են իրագործել ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը, սովորողների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը[7]:

Հնարների և մեթոդների ընտրության հարցում անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ չափանիշներով.

- հնարների և մեթոդների համապատասխանությունը դասավանդման սկզբունքներին.
- հնարների և մեթոդների համապատասխանությունը ուսուցման նպատակներին և խնդիրներին.
- հնարների և մեթոդների համապատասխանությունը կոնկրետ թեմայի բովանդակությանը,
- հնարների և մեթոդների համապատասխանությունը դպրոցականների կրթական կարողունակություններին՝ տարիքին, պատրաստվածության մակարդակին, դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների առկայությամբ,
- համապատասխանություն հենց ուսուցիչների կարողունակություններին[8]:

Այս չափանիշների հիմքով «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման համար ընտրվում են հետևյալ արդյունավետ մեթոդները՝ խոսքային, զննական, գործնական մեթոդներ, որոնց բովանդակությունը կներկայացնենք աշխատանքի համապատասխան բաժնում:

---

[6] Методология научных исследований: учебное пособие для учреждений высшего образования / Е.В. Пустынникова — Ульяновск, УлГУ, 2017., с. 43.
[7] Савин Н.В. Педагогика. М., 2018. С.217.
[8] Буланова-Топоркова Н.А., Духанева С.В. Педагогические технологии. М.: Просвет, 2014., 244 с., с. 59.

ԳԼՈՒԽ 2. «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

2.1. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցումը հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչների համապատասխան

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է սովորողներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը[9]:

Չափորոշչով սահմանված յուրաքանչյուր ուսումնական բնագավառ ներառում է իր ուղղվածությանը համապատասխան մեկ կամ մի քանի ուսումնական առարկաներ և (կամ) դասընթացներ: Ուսումնական պլանում կարող են ներառվել առարկաներ, որոնց բովանդակությունն առնչվում է մի քանի ուսումնական բնագավառների. «Հայրենագիտություն» և «Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառները հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի 5-6-րդ դասարաններում ներկայացվում են Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը և կրոնը, աշխարհագրությունը, հասարակական կյանքի ոլորտները ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով, 7-12-րդ դասարաններում՝ առանձին առարկաներով:

«Հասարակագիտություն» առարկայի հետ կապված հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հետևյալը. «հասարակություն, հասարակական գիտություններ. կրթության բովանդակության տիրույթ է, որը ներկայացնում է մարդկային հասարակության զարգացման ուղին՝ քաղաքակրթությունների ձևավորումից մինչև գլոբալ փոխազդեցություններ, նախապատմական ժամանակաշրջանից մինչև հետարդյունաբերական շրջանի գիտատեխնիկական արդի նվաճումներ: Միտված է մշտապես փոփոխվող աշխարհում հասարակական, քաղաքական, տնտեսական և

[9] Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը. Հասանելիությունը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 19:24)

մշակութային գործընթացների կապի ու փոխազդեցության մասին գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը, ինչպես նաև դրանցում դերակատարում ունեցած անհատների և խմբերի, նրանց փոխգործակցության իմացությանն ու վերլուծությանը, ներկայացնելով անհատի սոցիալականացման և հասարակական մասնակցության դրսևորումները՝ քննադատական և ստեղծագործ մտածողություն ունեցող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը»[10]:

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման հետ կապված հիմնարար մոտեցումները սահմանվում են առարկայական չափորոշչով: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը մեծ դեր ունի դպրոցի՝ քաղաքացիական կրթության առաքելության իրականացման գործում: Առարկայի առանցքային գաղափարներն են. անհատ-հասարակություն փոխազդեցությունը, հասարակության էվոլյուցիան (զարգացումը), հիմնարար արժեքների նշանակությունը, մարդկության գլոբալ (համաշխարհային), հիմնախնդիրները:

Յուրաքանչյուր դասարանի համար ընտրված է մեկ գլխավոր թեմա, որի շուրջ կառուցվում է բովանդակությունը: Այդ թեմաներն են՝

7-րդ դասարան՝ «Մարդ»:

8-րդ դասարան՝ «Հասարակության հիմնասյուներ. արժեքներ և իրավունքներ»:

9-րդ դասարան՝ «Պետություն»:

10-րդ դասարան՝ «Հասարակագիտական մտքի հիմունքներ»:

11-րդ դասարան՝ «Պետական համակարգի իրավական, տնտեսական և քաղաքական բաղկացուցիչները»:

12-րդ դասարան՝ «Ինքնաճանաչողություն»:

Առարկայի դասավանդումը հիմնվում է 3 մոտեցման վրա.

1. Հասկացությունների և սկզբունքների ուսուցում, ինչը հնարավորություն կտա իմանալու առարկայի բովանդակությունը:

2. Հետազոտական ուսուցում, ինչը հնարավորություն կտա հասկանալու, որ բազմաթիվ խնդիրներ չունեն միանշանակ լուծումներ և անխուսափելի են մշտական որոնումները:

3. Նախագծային ուսուցում, ինչը նպատակ ունի զարգացնել թիմային աշխատանքի հմտություններ, առաջարկել խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ:

«Հասարակագիտություն» առարկայի առանցքային գաղափարների ուսուցումը հիմնվելու հետևյալ մոտեցումների վրա.

[10] Նույն տեղում:

- Դասավանդման ընթացքում կիրառվելու է ինտեգրված մոտեցումը, ինչը հնարավորություն է տալու թեմաները դիտարկելու փոխկապակցվածության մեջ:

- Կարևորվելու է պարույրի մոտեցումը, որը հնարավորություն է տալու առանցքային գաղափարներին անդրադառնալու շարունակաբար և բարդության տարբեր մակարդակներով:

- Միակողմանի մոտեցումից խուսափելու համար թեմաների ներկայացման հիմքում դրվելու է պատմական մոտեցումը, ինչը ենթադրում է ներկայացնել խնդրի մասին բոլոր կարևոր տեսությունների, մոտեցումների էվոլյուցիան:

- Բովանդակության ներկայացումը հնարավորինս զերծ պահել կատեգորիկ մոտեցումներից, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան դրսևորելու մտածողության կարողունակություն, զարգացնելու որոշում կայացնելու և դիրքորոշում ունենալու հմտություններ:

- Առարկայի բովանդակությունը իրականության հետ կապելու համար ներառել հայ հասարակագիտական մտքի, արվեստի, գրականության ձեռքբերումները և Հայաստանի անցյալին ու ներկային վերաբերող օրինակները:

գ. Սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդների և տեխնոլոգիաների, գնահատման առանձնահատկությունների, եղանակների և ձևերի համառոտ նկարագրությունը[11]:

Ուսումնական գործընթացն իրականացվելու է խառը ուսուցման ձևաչափով (blended): Կիրառվելու են դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները: Ուսուցումն իրականացվելու է համադասարանական, անհատական և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում, ելնելով թեմայի բովանդակությունից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝ ուսումնական նյութի բացատրում, ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ, աշխատանք տպագիր և էլեկտրոնային սկզբնաղբյուրների նյութերով՝ գիտական բազային գործիքների օգտագործմամբ (մեջբերումներ, հղումներ, ամփոփումներ, եզրակացություններ, առաջարկություններ): զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն, աղբյուրների գնահատում և համադրում, հիմնախնդիրների հետազոտում, հանդիպումներ,

[11] «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի 7-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թվականի N 32-Ն հրամանը. Հասանելիությունը՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=121345 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 20:19)

մրցույթների անցկացում, հաշվետվությունների և էսսեների պատրաստում, բանավեճերի կազմակերպում, ՏՀՏ կիրառմամբ թվային գործիքների օգտագործում, դերային խաղեր, թղթապանակների պատրաստում, մեկնաբանում, անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում, անդրադարձ ուսումնական գործունեությանը[12]:

Գնահատման գործընթացում կիրառվելու են բազմաթիվ եղանակներ, բայց հիմնական շեշտը դրվելու է ձևավորող գնահատման վրա: Ձևավորող գնահատման ձևերից հատկապես կարևորվելու է հետադարձ կապը, որը աշակերտների ձեռքբերումներն արձանագրելու և բացթողումների շտկման ուղիները գտնելու հնարավորություն է տալու: Մեծ դասարաններում կարող է կիրառվել ձևավորող գնահատման ընդհանրական տարբերակը, երբ ուսուցիչն ամբողջ դասարանին ներկայացնում է սովորողների մոտ նկատվող տիպական սխալները: Ցածչ դասարաններում կարող է կիրառվել անհատական հետադարձ կապի համակարգը:

2.2. «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարներն ու մեթոդները ՀՀ դպրոցներում

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման համար կարելի է կիրառել բազմաթիվ հնարներ և մեթոդներ, ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական գործունեությունը զարգացնող մեթոդներ, ինքնուրույն աշխատանքի մեթոդներ:: Մեր դպրոցներում առավելապես կիրառվում են խոսքային, զննական, գործնական մեթոդներ: Վերջին ժամանակներս որոշակի կիրառություն է շարունակում ստանալ նախագծային մեթոդը: Այս բոլոր մեթոդների միջոցով հաղորդված նյութի հետ կապված կիրառվում է, մասնավորապես, իրական կյանքում յուրացրածը կենսագործելու հնարը, որը կարող է կատարվել, օրինակ, դերախաղի միջոցով:

Խոսքային մեթոդներ: Խոսքային մեթոդների դիդակտիկական հիմնական ֆունկցիան բառատրամաբանական, վերացարկված ընդհանրացված և համակարգված գիտելիքներ հաղորդելն է սվորողներին, խոսքի ձևավորումն է: «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչները խոսքային մեթոդների մեջ ներառում են պատմելու, զրույցի, դասախոսության, ուսումնական բանավեճի մեթոդները:

[12] «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի 7-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թվականի N 32-Ն հրամանը. Հասանելիությունը՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=121345 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 20:19)

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցչի կողմից պատմելը սկսվում է ներածությունով և ավարտվում է ամփոփումով: Ներածական խոսքում ուսուցիչը հաղորդում է ուսումնասիրվող նյութի՝ թեմայի բովանդակությունը, այն կապում է նախորդ թեմայի հետ, նշում թեմայի նշանակությունը, ուսումնասիրության նպատակը: Իր հաղորդած գիտելիքները հիմնավորում է օրինակներով, գիտական փաստերով, համապատասխան նկարազարդումներով (ցուցադրումներով): «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչը մերթ ընդ մերթ ընդհատում է իր շարադրանքը, աշակերտին մասնակից դարձնում նոր նյութի հաղորդմանը, ակտիվացնում նրանց ճանաչողական գործունեությունը: Պատմելու ժամանակ ուսուցիչը ներկայացնում է տեղեկությունը՝ փորձելով չպարտադրել իր տեսակետը, որպեսզի սովորողը կարիք զգա մտածելու նյութի շուրջ և հանգելու սեփական եզրակացությունների:Պատմում մեթոդի կիրառման արդյունավետությունը ենթադրում է ուսումնական նյութի համակողմանի յուրացում, դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ ընտրություն և այլն:

Զրույց մեթոդի հիմնական գործառությունը սովորողի անձնական փորձի ակտիվացումն է, նրան «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում նոր գիտելիքներ հաղորդելը կամ նոր գիտելիքների բացահայտման տանելը: Զրույցի հիմնական մեթոդական հնարը հարցեր առաջադրելն ու դրանց պատասխանները ձևակերպելն է: Մանկավարժի վարպետությունը կայանում է նրանում, որ կարողանա առաջարկել այնպիսի հարցեր, որոնք օգնեն սովորողներին կռահել պատասխանը, դրանք ճիշտ ձևակերպել և առաջադրել նոր հարցեր:

Ուսումնական բանավեճը խոսքային մեթոդներից է և կարևոր նշանակություն ունի սովորողների իմացական հետաքրքրությունները խթանելու գործում: Բանավեճի ժամանակ աշակերտերն արտահայտում են իրենց կարծիքները, համոզմունքները, տեսակետները, գնահատում իրենց և ընկերների գիտելիքների, կարողունակությունների, հմտությունների չափը, զարգացման աստիճանը:

Զննական մեթոդներ: Զննական մեթոսդների ենթախմբի մեջ են «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչը ներառում է իլյուստրացիայի և դեմոնստրացիայի մեթոդները: Զննական են համարվում այն մեթոդները, որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագաներից և ուսուցման տեխնիկական միջոցներից: *Իլյուստրացիան* (պատկերազարդում, նկարազարդում) ցուցադրման տեսակ է, այն ենթադրում է առարկաների և երևույթների ցուցադրում է սիմվոլային պատկերմամբ: Իլյուստրացիայի

միջոցներ են պլակատները, քարտեզները, ալբոմները, նկարները, դիմանկարները և այլն: *Դեմոնստացիա (ցուցադրում)* մեթոդի էությունը ևս ցուցադրումն է (գործիքներ, սարքեր, տեխնիկական միջոցներ, ֆիլմեր և այլն), սակայն ի տարբերություն իլյուստրացիայի, այս դեպքում ցուցադրմանը ուղեկցում է շարժումը:

Գործնական մեթոդներ: Գործնական մեթոդների հիմնական ֆունկցիան սովորողների ձեռք բերած գիտելիքների կիրառումը, դրանց գործուն բնույթ հաղորդելը, կարողունակությունների ու հմտությունների ձևավորումն է: Գործնական մեթոդների թվին «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչը դասում է վարժությունները, գործնական աշխատանքները, լաբորատոր աշխատանքները, ճանաչողական խաղերը[13]:

Վարժությունները ուսուցման մեթոդներ են, որոնք հնարավորություն են ընձեռնում կրկնել գործողությունը՝ հանդիսանալով կարողունակությունների ու հմտությունների ձեռքբերման կարևորագույն միջոց: Վարժությունները լինում են գրավոր և բանավոր: Գրավոր վարժությունները կիրառվում են ուղղագրության, քերականական կանոնները, մաթեմատիկական գիտելիքները ամրապնդելու համար և այլն: Գրավոր վարժություններ են համարվում շարադրություններ, թելադրություններ, ռեֆերատներ, զեկուցումներ, մեկնաբանական վարժություններ գրելը, ինչպես նաև՝ գրաֆիկական աշխատանքները, որոնք կիրառվում են երկրաչափությունից, աշխարհագրությունից, նկարչությունից և արտադրական ուսուցումից[14]:

Բանավոր վարժությունները լայնորեն օգտագործվում են խոսքի կուլտուրայի, տրամաբանական մտածողության եղանակների ուսուցման գործընթացում:

Դիդակտիկայում առանձնացվում են գործնական աշխատանքների 5 հիմնական փուլեր՝ ուսուցչի բացատրությունը, ցուցադրում, գործողությունների նմուշի ցուցադրում, երբ մի քանի աշակերտներ կատարում են գործողություններ բաց թողնված սխալների վերաբերյալ, աշխատանքի կատարում, վերահսկում, երբ սովորողների աշխատանքը ընդունվում և գնահատվում է[15]:

Խաղերի մեթոդ: Դերային խաղի գաղափարն այն է, երբ ինչ-որ մեկին խնդրում են ներկայացնել իրեն որպես այլ անձի կամ ինքն իրեն՝ որոշակի իրավիճակում: Այնուհետև

---

[13] Методика преподавания обществоведческих дисциплин: учебное пособие; авт.-сост. Т.И. Барсукова. – Ставрополь: СКФУ, 2016. – 189 с., с. 49.

[14] Բայադյան Հ., Ստեփանյան Դ., Սողոմոնյան Վ. Հասարակագիտություն: Մեթոդական ուղեցույց: 7-րդ դասարան / Հ. Բայադյան, Դ. Ստեփանյան, Վ. Սողոմոնյան.- Եր.: «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.- 108 էջ, էջ 77:

[15] Прямикова, Е.В. Теория и практика изучения обществознания в школе: учебно-методическое пособие / Е.В. Прямикова, Н.В. Ершова. – Екатеринбург: Уральский государственный педагогический университет, 2014. – 278 с., с. 62.

խաղացողներին խնդրում են վարվել այնպես, ինչպես նրանք ակնկալում էին այդ մարդուց: Արդյունքում՝ նրանք ինչ-որ բան են իմանում այդ անձի և/կամ իրավիճակի մասին: Հիմնականում յուրաքանչյուր խաղացող հանդես է գալիս որպես մյուսների սոցիալական միջավայրի մի մաս և ցուցադրում է մի կաղապար, որի շրջանակներում նրանք կարող են ստուգել իրենց վարքագծի խաղացանկը կամ ուսումնասիրել խմբի փոխկապակցված վարքը: Իրավիճակները կարող են լինել պարզ կամ բարդ, ծանոթ կամ անծանոթ: Դրանք կարելի է մանրամասն նկարագրել կամ թողնել խաղացողի երևակայությանը[16]:

Ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական գործունեությունը զարգացող մեթոդներ: Այս խմբի մեթոդները հնարավորություն են ընձեռում աշակերտին՝ ինքնուրույնաբար ճանաչել երևույթը, փաստը, առարկան, հայտնագործել նոր գիտելիքներ: *Ինդուկտիվ* մեթոդների կիրառումը օգնում է բացատրել ուսումնասիրվող նյութի բովանդակության տրամաբանությունը և դինամիկան: Դա կատարվում է մասնավորից դեպի ընդհանուրը տանող ուղիով: *Դեդուկտիվ* մեթոդը զարգացնում է սուբյեկտի վերացական մտածողությունը, արագացնում ուսումնասիրության տեմպը, բացահայտում է նյութի բովանդակության տրամաբանությունը՝ ընդհանուրից դեպի մասնավոր տանող ուղիով: *Վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) մեթոդը* կիրառելիս ուսուցիչը մշակում, հաղորդում է ուսումնական նյութը: Աշակերտները տանը ուսումնասիրում են համապատասխան տեքստը և իրենց յուրացրած գիտելիքները, կարողունակությունները ու հմտությունները վերադարձնում են ուսուցչին:

Ինքնուրույն աշխատանքի մեթոդները: Ինքնուրույն աշխատանքի կատարումը ենթադրում է փաստերի, երևույթների, օրինաչափությունների ինքնուրույն ճանաչում, ստեղծագործական գործունեության զարգացում:

Տարբերում ենք ինքնուրույն աշխատանքի հետևյալ տեսակները.

1. Նոր գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք, երբ սովորողները ուսումնասիրում են ուսումնական թեմային առնչվող լրացուցիչ գրականություն:

2. Նոր կարողունակություններ ու հմտություններ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք, երբ աշակերտները ծանոթանում են դիտազննական պարագաներին, ուսուցման տեխնիկական միջոցներին, ճանաչում գործիքները, սարքերը:

[16] Բայադյան Հ., Ստեփանյան Դ., Սողոմոնյան Վ. Հասարակագիտություն: Մեթոդական ուղեցույց: 7-րդ դասարան / Հ. Բայադյան, Դ. Ստեփանյան, Վ. Սողոմոնյան.- Եր.: «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.- 108 էջ, էջ 96:

3. Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ, օրինակ՝ աշակերտները տարբեր թեմաների շուրջ գրում են ստեղծագործական շարադրություններ, բանաստեղծություններ, պատմվածքներ:

Աշխատանք դասագրքով: Այս մեթոդի հիմնական գործոնը սովորողներին գրքերից ինքնուրույնաբար անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու կարողության ձևավորումն է: Գրքով աշխատելն ունի դիդակտիկական անփոխարինելի նշանակություն: Գիրքը հնարավորություն է տալիս նյութի վրա կատարել բազմաբնույթ աշխատանք, կրկին ու կրկին անդրադառնալ ուսումնական տեղեկատվությանը: Դասագիրքը պետք է սովորողին ցուցումներ տա գրքով արդյունավետ աշխատելու եղանակների մասին, պարունակի հարցեր՝ կրկնության և ինքնաստուգման համար և այլն: «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչը կարող է շատ չհենվել դասագրքի վրա և նյութը հագեցնել առօրյա կյանքից վերցված օրինակներով, սակայն չպետք է շեղվի հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչներից:

Սովորողների ուսումնահետազոտական գործունեության խթանման մեթոդներ: Ցանկացած գործունեություն ընթանում է ավելի արդյունավետ և տալիս է որակական արդյունքներ, եթե անձի մեջ կան ուժեղ, խոր դրդապատճառներ: Ուսումնական գործունեությունը ևս առավել հաջող է ընթանում, եթե սովորողների մեջ ձևավորված է դրական վերաբերմունք ուսման նկատմամբ, եթե նրանք ունեն իմացական հետաքրքրություններ, գիտելիքներ, կարողունակություններ ու հմտություններ ստանալու պահանջմունք, պարտքի ու պատասխանատվության զգացում և ուսման այլ դրդապատճառներ:

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման գործում շատ կարևոր են ուսման մեջ պարտքի ու պատասխանատվության խթանման մեթոդները: Պարտքի և պատասխանատվության դրդապատճառները ձևավորվում են մի ամբողջ խումբ մեթոդների ու հնարների կիրառմամբ: Դրանք են՝

ա) Ուսման հասարակական նշանակության պարզաբանումը:

Ժամանակակից գիտության նվաճումները տանում են արտադրության մեջ հետևողական փոփոխությունների: Սովորողները պետք է հասկանան ուսման հասարակական նշանակությունը, այն, որ այսօրվա ձեռք բերած գիտելիքները վաղը ակտիվ գործունեության հիմք են հանդիսանալու: Ուսումը ոչ միայն հարստացնում է գիտելիքներով, այլև ձևավորում է անձը, նրա աշխարհայացքը, բարոյական, գեղագիտական և այլ որակները:

բ) Ուսման անձնային նշանակության պարզաբանումը:

Այս հարցը հատկապես կարևորվում է բարձր դասարաններում, երբ աշակերտներն ընտրում են ապագա մասնագիտություն և այդ մասնագիտությանը համապատասխան ուսումնական առարկաներ: Օրինակ՝ եթե սովորողն ընտրել է հումանիտար բնույթի մասնագիտություն, ապա կարևորություն է տալիս այն ուսումնական առարկաներին, որոնք մոտ են ակնկալվող մասնագիտությանը: Ուստի պետք է նրանց բացատրել ուսումնական մյուս առարկաների յուրացման նշանակությունը:

գ) Ուսումնական պահանջների ներկայացումը:

Սովորողներին պահանջներ ներկայացնելու մեթոդը որոշվում է վարքի կանոններով, բոլոր առարկաներից գիտելիքների գնահատման չափանիշերով, դպրոցի կանոնադրությամբ և այլն:

դ) Ուսման մեջ խրախուսանքի և պարսավանքի մեթոդ:

Խրարուսանքը մեծ նշանակություն ունի անձի գործունեության և վարքի գնահատման համար: Այն հնարավորություն է ընձեռում՝ ճանաչելու այն գործողության իմաստն ու դրանց դրդապատճառները, որ կատարել է աշակերտը: Խրախուսելիս պետք է հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները, խառնվածքը, բնավորությունը, բարոյական հատկանիշները: Ժամանակակից դպրոցում կիրառվում են խրախուսանքի տարբեր ձևեր: Օրինակ, ուսուցչի գովասանքը, բանավոր, գրավոր շնորհակալությունները, դասագրքով պարգևատրումը և այլն[17]:

Այսպիսով, սովորողը կիրառվող հնարների և մեթոդների միջոցով պետք է հասկանա, որ «Հասարակագիտություն» առարկան աներկբա կարևոր դեր ունի իր հետագա կենսավարման գործում և առավել ուշադիր լինի առարկայի ուսանման գծով:

[17] Лыков, М.Н. Принципы формирования содержания современных учебников по обществознанию / М.Н. Лыков // Казанский педагогический журнал. – 2016. – № 5 (47). – С. 25-31.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման կազմակերպման արդյունավետ հնարների և մեթոդների և դրանց ընտրության չափանիշների վերաբերյալ ուսումնասիրության տեսական և կիրառական ասպեկտները մենք տեսնում ենք, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել ժողովրդավարության հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալապես պատասխանատու քաղաքացի:

«Հասարակագիտություն» առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին քննադատական մոտեցում ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս: Սովորողը պետք է կարողանա գիտականորեն ընկալել մարդու և հասարակության հիմնահարցերը, քաղաքական կարգերն ու գաղափարները, կայուն զարգացման հակասությունները, հետազոտել և մեկնաբանել դրանք, տիրապետել ճանաչողական, սոցիալական և անհատական կարողունակությունների ու հմտությունների, իրազեկ լինել տեղական, ազգային և համաշխարհային հիմնախնդիրներին՝ հենվելով ազգային ու համամարդկային արժեքների վրա:

«Հասարակագիտությունը», իր մեջ ներառելով գիտելիքներ մի շարք կարևորագույն բնագավառներից, օժտված է վիթխարի կրթական ներուժով, քանի որ այն հիմնական առարկան է, որ ձևավորում է մարդու աշխարհայացը, մտածելակերպը (մենթալիտետ), արժեքային համակարգը, ինչպես նաև վերաբերմունքն իր և այլոց հանդեպ:

«Հասարակագիտության» ուսուցումը ապագա քաղաքացուն հնարավորություն կտա իր առջև ծառանալիք խնդիրների պատասխանը որոնել ոչ թե տարերայնորեն, տեղեկատվական հեղեղի ճնշման ազդեցությամբ, այլ օգտագործելով այն բոլոր հմտությունները, գիտելիքները և արժեքային մոտեցումները, որ նրա սեփականությունն են դառնալու դպրոցական նստարանից:

Այս բոլոր արդյունքները հնարավոր է ապահովել, եթե ուսուցչի կողմից կիրառվում են մեր կողմից ներկայացված մեթոդները: Դրանք օգնում են, որ գործնականում սովորողների մեջ ձևավորվեն ակտիվ քաղաքացիության դիրքորոշում, իրավունքները պաշտպանելու, ինչպես նաև պատասխանատվությունն իրականացնելու կամք և հմտություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մասնագիտական գրականություն

1. Բայադյան Հ., Ստեփանյան Դ., Սողոմոնյան Վ. Հասարակագիտություն: Մեթոդական ուղեցույց: 7-րդ դասարան / Հ. Բայադյան, Դ. Ստեփանյան, Վ. Սողոմոնյան.- Եր.: «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.- 108 էջ, էջ 77:
2. Գյուլբուդաղյան Ա. Վ., Հարությունյան Կ. Ռ., Թովմասյան Տ. Ա., Հասարակագիտություն: 8-րդ դասարան: Դասագիրք հանրակրթ. հիմն. դպր. համար, Երևան, Զանգակ, 2013:
3. Մալոյան Ա. ««Հասարակագիտություն» առարկայի դասավանդման խնդիրների շուրջ», «Մարդ և հասարակություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N 2 (64), 2016., էջ 18:
4. Буланова-Топоркова Н.А., Духанева С.В. Педагогические технологии. М.: Просвет, 2014., 244 с., с. 59.
5. Лыков, М.Н. Принципы формирования содержания современных учебников по обществознанию / М.Н. Лыков // Казанский педагогический журнал. – 2016. – № 5 (47). – С. 25-31.
6. Методика преподавания обществоведческих дисциплин: учебное пособие; авт.-сост. Т.И. Барсукова. – Ставрополь: СКФУ, 2016. – 189 с., с. 49.
7. Методология научных исследований: учебное пособие для учреждений высшего образования / Е.В. Пустынникова — Ульяновск, УлГУ, 2017., с. 43.
8. Прямикова, Е.В. Теория и практика изучения обществознания в школе: учебно-методическое пособие / Е.В. Прямикова, Н.В. Ершова. – Екатеринбург: Уральский государственный педагогический университет, 2014. – 278 с., с. 62.
9. Савин Н.В. Педагогика. М., 2018. С.217.
10. Толочко А. В. Теория и методика обучения обществознанию в школе: учебное пособие. – Елец: Елецкий государственный университет им. И.А. Бунина, 2019. – 124 с., с. 13.

Համացանցային աղբյուրներ

11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը. Հասանելիությունը՝

https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 19:24)

12. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի 7-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թվականի N 32-Ն հրամանը. Հասանելիությունը՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=121345 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 20:19)